

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ, ԲՆԱԿԱՆՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Հանձնարարակա նի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը	Կատարման պատաս խանատուն	Համակատա րողը	Ժամկետը	2019թ. ֆինանսավորման աղբյուրը և պահանջվող գումարը	2019թ. աշխատանքների և միջոցառումների կատարման ընթացքը
1 <u>Կառավարման համակարգի կատարելագործում</u>							
1.1	«Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման համակարգի բարելավում	1) Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում, միջոցառումների մշակում	Շրջակա միջավայրի նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2019 թ. և շարունակական	«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կատարվող «Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի	<u>Շրջակա միջավայրի նախարարության</u> «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը պետական ծրագրի շրջանակներում իրականացրել է Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի որակի մոնիթորինգ: Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է հուլիս ամսին: Լճի ջրի որակի ուսումնասիրության համար վերցվել են փորձանմուշներ ինչպես լճի մակերեսից, այնպես էլ խորքային շերտերից՝ 5, 10, 20,

					<p>ծառայություններ» ծրագրի շրջանակներում</p>	<p>30մ խորություններից, որոնցից յուրաքանչյուրում որոշվել է միջին հաշվով 40-ական ցուցանիշ:</p> <p>Բացի վերոնշյալ ծրագրերի Սևանա լճի գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել նաև «Հելմիոլցի շրջակա միջավայրի հետազոտությունների կենտրոնի» լճի հետազոտությունների բաժնի կողմից: Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգի լրացուցիչ նմուշառումներ են իրականացվել ապրիլ-դեկտեմբեր ամիսներին՝ լճի մակերևույթից և տարբեր խորություններից (Մեծ Սևանի համար՝ 5, 10, 20, 25, 30մ խորություններից, Փոքր Սևանի համար նաև՝ 55, 70, 79մ խորություններից):</p> <p>Սևանա լճից վերցված փորձանմուշներում, ձկնատնտեսական նորմերի գնահատման համաձայն, ՍԹԿ-ն գերազանցում են հիմնականում թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջարկի, թթվածնի քիմիական պահանջարկի, ցինկի, պղնձի, քրոմի, կադմիումի, մանգանի, վանադիումի և սելենի կոնցենտրացիաները: Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվում են ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների սահմաններում:</p> <p>Սևանա լճում կապտականաչ ջրիմուռների աճի հնարավոր պատճառ հանդիսասանում են լճի ջրի տաքացումը և լճում կենսածին տարրերի, հատկապես, ֆոսֆորի</p>
--	--	--	--	--	--	---

						<p>առկայությունը: Վերջին տարիներին դիտվում է Սևանա լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի աճ:</p> <p>Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ առանց կենսաբանական մաքրման արտահոսքերը Սևանի ՋԿՏ-ի գետեր կամ անմիջապես Սևանա լիճ: Չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերը իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ կարող են տանել ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն:</p> <p>Սևանա լիճ թափվող գետերի հիդրոքիմիական մոնիթորինգն իրականացվել է Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 10 գետի (Ձկնագետ, Մասրիկ, Սոթք, Կարճաղբյուր, Վարդենիս, Մարտունի, Արգիճի, Ծակքար, Շողվազ, Գավառագետ) և Արփա-Սևան թունելի 19 մոնիթորինգային դիտակետից: 2019թ. ընթացքում Սևանա լիճ թափվող գետերից Ձկնագետի ջրի որակը Սեմյոնովկայից վերև հատվածում հիմնականում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հիմնականում «միջակ» (3-րդ դաս): Մասրիկ գետի ջրի որակը Վերին Շորժա գյուղից վերև գնահատվել է հիմնականում «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակից» «վատ» (3-րդից 5-րդ դաս): Սոթք գետի ջրի որակը հանքավայրից վերև հատվածում հիմնականում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի</p>
--	--	--	--	--	--	--

						<p>հատվածում՝ հիմնականում «միջակ» (3-րդ դաս): Կարճադրյուր գետի ջրի որակը Ախարածորից վերև հատվածում հիմնականում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հիմնականում «միջակ» (3-րդ դաս): Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հիմնականում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ «միջակից» «վատ» է (3-րդից 5-րդ դաս): Մարտունի գետի ջրի որակը Գեղիովիտ գյուղից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակից» «վատ» (3-րդից 5-րդ դաս): Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտից վերև գնահատվել է հիմնականում «անբավարար» (4-րդ դաս) և գետաբերանի հատվածում՝ հիմնականում «միջակ» (3-րդ դաս): Ծակքար և Շողվազ գետերի ջրի որակը գետաբերանի հատվածներում հիմնականում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գավառագետ գետի ջրի որակը գյուղ Ծաղկավանից վերև հատվածում գնահատվել է հիմնականում «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հիմնականում «անբավարար» (4-րդ դաս): Արփա-Սևան ջրատարի ջրի որակը գնահատվել է հիմնականում «անբավարար» (4-րդ դաս): Սևանի ջրավազանային կառավարման տարածքի որակի մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալները վերլուծվել և ամփոփվել են «Շրջակա միջավայրի</p>
--	--	--	--	--	--	--

						<p>մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի ամենամյա տեղեկանքներում, եռամսյակային տեղեկագրերում, հանձնվել համապատասխան կազմակերպություններին և հրապարակվել ՊՈԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքում (www.armmonitoring.am):</p> <p>ՀՀ ԳԱԱ ԿՀԵԳԿ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ</p> <p>2019թվականին իրականացվել են Սևանա լիճ թափվող հիմնական գետերի՝ Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի, Վարդենիս, Կարճաղբյուր և Մասրիկ, ձկնաբանական ուսումնասիրություններ:</p> <p style="text-align: center;">Արդյունքում</p> <p>Ձկնագետ՝ ջրի որակը վերին հոսանքում ամռանը և աշնանը համապատասխանել է «լավ որակ», իսկ ստորին հոսանքում համապատասխանել են «միջին որակ»:</p> <p>Գետի վերին հոսանքում հատակային անողնաշարների բազմազանության ինդեքսի մեծությունը եղել է բավականին բարձր, համապատասխանել է «լավ» ջրի որակ դասին:</p> <p>Գետի ստորին հոսանքի հատվածում կենսաբազմազանության և բիոթիկ ինդեքսների արժեքները եղել են ավելի ցածր, քան վերին հատվածում:</p> <p>Գավառագետի՝ վերին հոսանքում 2019թ., ինչպես և նախորդ տարիներին, տեղի բնակչության կողմից կատարվող ջրառի պատճառով, հունը եղել է գրեթե ցամաք և</p>
--	--	--	--	--	--	--

						<p>անհնար է եղել իրականացնել զոռբենթոսի նմուշառումը:</p> <p>Գետի ստորին հոսանքը աղտոտված է Գավառ քաղաքի և բազմաթիվ գյուղերի հոսքաջրերով և կենցաղային աղբով:</p> <p>Գավառագետի ստորին հոսանքում ջրի որակը, ինչպես և նախորդ տարի, համապատասխանել է «ցածր որակ» դասին:</p> <p>Մասրիկ գետի վրա մեծ ազդեցություն ունեն Սոթք և Մեծ Մասրիկ գյուղերի հոսքաջրերը, ինչպես նաև ոռոգման և ՀԷԿ-ի համար կատարվող ջրառը: Ջրի որակը համապատասխանել է «բարձր որակ» I դասին և այստեղ դեր է խաղացել ջրի ցածր ջերմաստիճանի պայմաններում լուծված թթվածնի բարձր պարունակությունը: Գետի ստորին հոսանքի դիտակետում գրանցվել են կենսաբազմազանության ինդեքսի ոչ մեծ արժեքներ, իսկ ջրի որակը համապատասխանել է «ցածր որակ» IV դասին՝ ամռանը և միջին որակ դասին՝ աշնանը:</p> <p>Սոտք վտակի ջրի որակը համապատասխանել է «բարձր որակ» I դասին:</p> <p>Արգիճի գետի վերին հոսանքում հատակային համակեցության ապրելավայրերի բազմազանության շնորհիվ, գետի ջրի որակը համապատասխանել է «բարձր որակ» I դասին:</p> <p>Կարճաղբյուր (Մաքենիս) գետի՝ ջրի</p>
--	--	--	--	--	--	---

						<p>աղտոտման նկատմամբ տղերանտ տեսակների մեծ քանակի պատճառով, այստեղ գրանցվել է «միջին» ջրի որակ: Գետում բավականին մեծ է կենցաղային աղբի քանակը, այստեղ են թափվում համանուն գյուղի հոսքաջրերը:</p> <p>Լիճք գետակ՝ բոլոր դիտակետերում ինդեքսի արժեքները համապատասխանել են «շատ լավ» դասին: Բացառություն է կազմել աշնանը ստորին հոսանքի ջրի որակը, որը համապատասխանել է «լավ» դասին:</p> <p>Ստացված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ գետի էկոհամակարգը կայուն վիճակում է: Սակայն աղտոտման գործոնի նվազեցման խնդիրը շարունակում է մնալ չլուծված:</p> <p>Վարդենիկ գետ՝ 2013թ. գետի վրա կառուցվել է «Վարդենիկ» Փոքր ՀԷԿ-ը: Նախորդ տարվա համեմատ կտրուկ նվազել է կենդանիների տեսակային բազմազանությունը և ինդեքսի արժեքը նվազել է:</p> <p>Դրա պատճառը Վարդենիկ գյուղից գետ թափվող հոսքաջրերն են, ջրառն և գետի հունում կուտակված օրգանական նյութի փտման պրոցեսները: Ստորին հոսանքի ջրի որակը համապատասխանել է ամռանը «ցածր որակ» IV դասին, իսկ աշնանը՝ «միջին որակ» III դասին:</p> <p>Եզրակացություններ</p> <ul style="list-style-type: none"> Ձկնագետ, Սուռք և Արգիճի գետերի վերին հատվածներում գրացվել է հունի
--	--	--	--	--	--	--

						<p>տղմակայում և պերիֆիտոնի զարգացում, ինչը անասնաբուժական ֆերմաներից և ամառային արոտավայրերից գետերը լցվող օրգանական աղտոտման հետևանք է:</p> <ul style="list-style-type: none"> • Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրված գետերի վերին հոսանքներում զոոբենթոսի ամենամեծ թվաքանակ (7 հազար առ./մ²) և կենսազանգված (12 գ/մ²) գրանցվել է աշնանը Վարդենիկ գետում մինչև ՓՀԷԿ-ի հատվածը: Սոտք, Արգիճի, Կարճաղբյուր և Լիճք գետերի զոոբենթոսի քանակական ցուցանիշները եղել են գրեթե նույն տիրույթներում: Հատակային անողնաշարների ամենափոքր թվաքանակ գրանցվել է Ձկնագետում: • Ուսումնասիրված գետերից, ձկների միգրացիայի և ձվադրելու համար, ամենանպաստավոր պայմանները գրանցվել են Լիճք գետակում և, որոշ վերապահումներով, Կարճաղբյուր և Ձկնագետ գետերում: Մասրիկ գետի ավազանում ձկների ձվադրավայրեր կարող են հանդիսանալ Ակունք և Սոտք վրակների վերին հոսանքները: • Շենոն-Վայների կենսաբազմազանության ինդեքսի ամենամեծ արժեքները գրանցվել են Սոտք, Արգիճի, Կարճաղբյուր, Լիճք և Վարդենիկ գետերի միայն վերին հոսանքներում, ինչը վկայում է այդ հատվածներում ապրելավայրերի համեմատաբար քիչ խախտված վիճակի մասին: Ձկնագետ գետի
--	--	--	--	--	--	---

						<p>ստորին հոսանքում 2018թ. գրանցված ինդեքսի բարձր ցուցանիշները, 2019թ-ին, գետի օրգանական աղտոտման հետևանքով, կտրուկ նվազել են:</p> <ul style="list-style-type: none"> • Ամենաբարձր ջրի որակը, ըստ բիոթիկ ինդեքսի, գրանցվել է Սոտք, Արգիճի, Կարճաղբյուր, Լիճք և Վարդենիկ գետերի վերին հոսանքներում, ինչպես նաև Լիճք գետակի գետաբերանում: • Վերջին տարիների ընթացում Գավառագետի վերին հոսանքում հունը տարվա մեծ մասը գրեթե չոր է եղել, ինչի պատճառը անկառավարների ջրառն է: Դա վնաս է հասցնում գետի էկոհամակարգին և լուրջ խոչընդոտ է Սևանա լճի ձկնատեսակների միգրացիայի համար: • Վարդենիս, Արգիճի և Մասրիկ գետերի ՓՀԷԿ-րի ձկնանցարարները պիտանի չեն ձկների միգրացիայի համար: ՓՀԷԿ-րի անկառավարելի ջրառի պատճառով գետերի հունը ջրազրկվում է և մասնատվում: • Գետերի աղտոտումը նվազեցնելու համար անհրաժեշտ է հսկողություն սահմանել գետերի վերին հոսանքում գտնվող ֆերմաների նկատմամբ, ինչպես նաև իրականացնել բնակավայրերի կոյուղաջրերի ոչ միայն մեխանիկական, այլև կենսաբանական մաքրումը: <p>(Ծավալուն հաշվետվությունը՝ 61 թերթ, ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարություն):</p>
	2) Սևանա լճում և	Արտակարգ	Գիտությունն		Արտակարգ	<u>Արտակարգ իրավիճակների</u>

	<p>նրա ջրհավաք ավազանում հիդրոկենսաբանական և հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի իրականացում</p>	<p>իրավիճակների նախարարություն</p>	<p>երի ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	<p>իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից 2019թ. ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների ծրագրին համապատասխան</p>	<p>նախարարության 2019 թվականի ընթացքում ԱԻՆ Հիդրոմետ ծառայության կողմից իրականացվել է Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում հիդրոօդերևութաբանական մոնիթորինգ՝ կատարվել են լճի ջրի մակարդակի, ջերմաստիճանի, թափանցելիության, սառցային երևույթների և գոլորշացման դիտարկումներ, գետերով, Արփա-Սևան ջրատար թունելով Սևանա լիճ մուտք գործած և ոռոգման նպատակով լճից բաց թողնված ջրաքանակների հաշվառում: Ստացված տեղեկատվությունն ամեն օր հաղորդվել է շահագրգիռ կազմակերպություններին, այդ թվում ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովին: Ամիսը մեկ անգամ, էքսպեդիցիոն կարգով, լճի հայելու ֆիքսված կետերում ստանդարտ խորությունների վրա կատարվել են ջրի ջերմաստիճանի, ալիքի բարձրության ու ջրի թափանցելիության չափման աշխատանքներ: Մարտի երրորդ տասնօրյակում հանրապետության ղեկավար մարմիններին, ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովին և այլ կազմակերպությունների տրամադրվել է Սևանա լճի մակարդակի կանխատեսում 2019թ. հուլիսի 1-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի համար, ինչպես նաև գարնանային վարարումների ընթացքում Սևանա լիճ գետային ներհոսքի կանխատեսում:</p>
--	--	------------------------------------	---	---	---

						<p>Հոկտեմբերին պայմանավորված սեզոնային հիդրոոդերևութաբանական պայմանների կանխատեսմամբ վերանայվել է 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակի փոփոխության կանխատեսումը և տրվել է ճշգրտում, համաձայն որի 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կանխատեսվել է 1900.42-1900.44մ սահմաններում, որը 2019 թվականի հունվարի 1-ի համեմատ բարձր կլիներ 3...5 սմ-ով, և արդյունքում այն արդարացել է 100%-ով: 2019 թվականի դեկտեմբերի 31-ին Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.43մ:</p> <p>Իրականացվել է տեղեկատվական ապահովում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպություններին:</p> <p>ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ</p> <p>2019 թ. իրականացվել է Սևանա լճի համալիր ջրակենսաբանական հետազոտություններ:</p> <p>2019թ. օգոստոս-սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին, իրականացվել է էնդեմիկ ձկնատեսակների համար հիմնական ձվադրավայր հանդիսացող՝ Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի, Մասրիկ, Կարճաղբյուր և Վարդենիկ գետերում ձկների կենսապայմանների, մասնավորապես հատակային ֆաունայի և</p>
--	--	--	--	--	--	---

						<p>մակրոֆիտների հետազոտություն:</p> <p>Լճի պելագիալում ձկնային հանրույթի ընդհանուր կենսազանգվածը գնահատվել է ելնելով Փոքր Սևանի՝ 14,12 կմ3, և Մեծ Սևանի՝ 24,15 կմ3 ծավալներից: Նվազագույն թվաքանակը գրանցվել է 2013թ-ին, առավելագույնը՝ 2018թ-ին: 2019թ-ի ընթացքում նկատվել է թվաքանակի նվազում մինչև 18,5 միլիոն առանձնյակ՝ ամառային դիտարկման և մինչև 16,9 միլիոն առանձնյակ՝ աշնանային դիտարկման ժամանակ:</p> <p>Սևանա լճի ջրիավաք ավազանի գետերում իրականացվել են մակրոֆիտների տարածվածության, տեսակային կազմի, առատության, պրոյեկտիվ ծածկույթի ուսումնասիրություններ, բացահայտվել է մակրոֆիտների դերը և նշանակությունը հիդրոէկոհամակարգի տրոֆիկ շղթայում: Զրաճահճային բույսերը հանդիսանում են կեր և բնակատեղի մի շարք ջրային անողնաշավորների, ջրլող թռչունների և ձկների համար: Մակրոֆիտների բուսուտներում ձևավորվում են ջերմաստիճանային և այլ բարենպաստ պայմաններ, որոնք նպաստում են կնդանիների աճին և բազմացմանը: Մակրոֆիտների մացառուտներում գրանցվել են մոտ 100 տեսակ բուսասեր խեցգետնակերպեր:</p> <p>Գետերում մակրոֆիտների տեսակների բազմազանության քանակական</p>
--	--	--	--	--	--	---

						<p>գնահատման համար օգտագործվել է Շենոնի գործակիցը: Հիմնվելով հիդատոֆիտ մակրոֆիտների թվաքանակի, Շենոնի գործակցի և տեսակների առատության գումարային ցուցանիշի վրա՝ որոշվել է գետերի տրոֆայնության մակարդակը: Մակրոֆիտների կենսաբանական գործակցի (IBMR) միջոցով գնահատվել է կենսածին տարրերի մակարդակը հետազոտվող գետերում:</p> <p>Հետազոտությունների համար նյութ են ծառայել Սևանա լիճ թափվող 7 գետերի տարբեր հատվածներից վերցված մակրոֆիտների բուսանմուշները:</p> <p>Այսպիսով Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերի էկոլոգիական վիճակի հետազոտությունները ցույց տվեցին, որ ձվադրավայրերը գտնվում են խիստ անմխիթար վիճակում: Բնակավայրերի կոմունալ կենցաղային թափոններով աղտոտված են գետերի հունները, գետի ջրերին են խառնվում կենցաղային և գյուղատնտեսական հոսքաջրերը, որի պատճառով, հատկապես բնակավայրերից հետո, խիստ վատանում է ջրերի որակը: Ջրային ռեսուրսների աղտոտվածության արդյունքում վտանգվում են կենսառեսուրսները, հիդրոբիոտների շրջանում տարածվում են հիվանդություններ: Գյուղատնտեսական և էներգետիկ նպատակներով իրականացվող չկարգավորվող ջրառը, ինչպես նաև գետերի վրա կառուցված ՀԷԿ-երի</p>
--	--	--	--	--	--	--

							անհամապատասխանությունը ձկնատնտեսական նորմերին, սպառնում է ձվադրման նպատակով գետ բարձրացող ձկնատեսակների գոյությանը: Անօրիանական որսը խզման վտանգի առաջ է կանգնեցրել խեցգետնի և որոշ ձկնատեսակների գոյությունը լճում:
	3) «Սևան» ազգային պարկ»-ի ռեկրեացիոն գոտում հանրային լողափի կազմակերպում	Շրջակա միջավայրի նախարարություն	Արտակարգ իրավիճակների նախարարություն Առողջապահության նախարարություն «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ (համաձայնությամբ)		«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	Շրջակա միջավայրի նախարարություն ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N527-Ն, 2012 թ. հունիսի 07-ի N752-Ն, 2015 թ. հոկտեմբերի 01-ի N1122-Ն որոշումներով «Սևան» ազգային պարկի տարածքում ստեղծված 8 հանրային լողափերից կահավորված են և գործում են միայն N1, N2, N3 հանրային լողափերը, որտեղ 2019թ. հանգստի սեզոնին իրենց հանգիստն են անցկացրել շուրջ 100 000 մարդ: Արտակարգ իրավիճակների նախարարության «Սևան ազգային պարկ»-ի ռեկրեացիոն գոտում Արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումները ս.թ. հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը Սևանի թերակղզու թվով 3, Սևանի N№1, Գեղամա, Մարտունու և Վարդենիսի քաղաքային, ինչպես նաև մի շարք մասնավոր լողափերում անցկացվող թվով 16 մարզական, մշակութային և այլ զանգվածային միջոցառումների ժամանակ, մասնակիցների անվտանգությունն ապահովվելու նպատակով, իրականացրել են հերթապահություններ և ուժեղացված ծառայություններ:	

						<p>Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ լողասեզոնի ժամանակ բնակչության անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ է նախապես ձեռնարկել լրացուցիչ միջոցառումներ, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> - Սևանա լճի ջրային ափամերձ և ցամաքային ջրամերձ տարածքներում թերությունների բացահայտման, վերացման, լողափերում անվտանգության վերաբերյալ տեղեկատու վահանակների և ցուցանակների տեղադրման ուղղությամբ, - հանրային և մասնավոր լողափերում լողանշանների, լողանալու համար վտանգավոր ժամերի և ոչ բարենպաստ եղանակային պայմանների վերաբերյալ ազդանշանային դրոշակների տեղադրում, ինչպես նաև փրկարարական հենակետերի և բուժկետերի տեղակայման ուղղությամբ, - լողամիջոցների տեխնիկական անվտանգության փորձաքննության անցկացման, շահագործման անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ: «Սևան ազգային պարկ»-ի ռեկրեացիոն գոտում Արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումները ս.թ. հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը Սևանի թերակղզու թվով 3, Սևանի №1, Գեղամա, Մարտունու և Վարդենիսի քաղաքային, ինչպես նաև մի շարք մասնավոր լողափերում անցկացվող թվով 16 մարզական, մշակույթային և այլ զանգվածային միջոցառումների ժամանակ,
--	--	--	--	--	--	---

						<p>մասնակիցների անվտանգությունն ապահովվելու նպատակով, իրականացրել են հերթապահություններ և ուժեղացված ծառայություններ:</p> <p>Մինչույն ժամանակ հայտնում եմ, որ լողասեզոնի ժամանակ բնակչության անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ է նախապես ձեռնարկել լրացուցիչ միջոցառումներ, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> - Սևանա լճի ջրային ափամերձ և ցամաքային ջրամերձ տարածքներում թերությունների բացահայտման, վերացման, լողափերում անվտանգության վերաբերյալ տեղեկատու վահանակների և ցուցանակների տեղադրման ուղղությամբ, - հանրային և մասնավոր լողափերում լողանշանների, լողանալու համար վտանգավոր ժամերի և ոչ բարենպաստ եղանակային պայմանների վերաբերյալ ազդանշանային դրոշակների տեղադրում, ինչպես նաև փրկարարական հենակետերի և բուժկետերի տեղակայման ուղղությամբ, - լողամիջոցների տեխնիկական անվտանգության փորձաքննության անցկացման, շահագործման անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ: <p><u>Առողջապահության նախարարության</u> կողմից իրականացվել է Սևանա լճի ռեկրեացիոն գոտիների հատվածներում լճի ջրի 403 նմուշի մանրէաբանական, 447 նմուշի մակաբուժաբանական և 306 նմուշի</p>
--	--	--	--	--	--	---

						<p>քիմիական հետազոտություններ, որոնց արդյունքում վերոգրյալ նմուշներում ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի ապրիլի 05-ի N 09-Ն հրամանով հաստատված «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.5.001-18 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներից շեղումներ չեն արձանագրվել: Կատարվել է նաև լճի ջրի 77 նմուշի թունաքանակական հետազոտություններ, որից 32 նմուշների ջրերը ունեցել են թունավոր ազդեցություն: Վերջիններիս նմուշառման հասցեները ներկայացվել են համապատասխան մարմիններին՝ լողը արգելելու և լճի ռեկրեացիոն տարածքների ջրի որակը վերականգնելու նպատակով:</p>
--	--	--	--	--	--	--

		4) «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ կարողությունների զարգացում (մասնավորապես՝ տարեկան անտառապլանավորման, հատատեղերի հատկացման տեղորոշման), մասնագիտական ունակությունների կատարելագործում	Շրջակա միջավայրի նախարարություն		2019թ.	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցները պարբերաբար մասնակցել են քննարկումների՝ անցկացվել են խորհրդակցություններ:
--	--	---	---------------------------------	--	--------	---	--

2. Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման գործառույթների կատարելագործման միջոցառումներ

2.1	Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում	Առաջնահերթ մաքրման ենթակա, մասնավորապես՝ ջրածածկ և ջրածածկման ենթակա անտառաշերտի մաքրում, շուրջ 66.8 հա	Շրջակա միջավայրի նախարարություն	Գեղարքունիքի մարզպետարան	2019 թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե՝ «Սևանա լճի ջրածածկ անտառտնկա	Շրջակա միջավայրի նախարարություն «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 117062.0 հազար դրամ 66.8 հա ջրածածկ տարածք մաքրելու համար: ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի 1142-Ն որոշման համաձայն գումարը
-----	--	--	---------------------------------	--------------------------	------------------------	---	---

					<p>րկների մաքրում» միջոցառում՝ 117,062.0 հազ. դրամ</p> <p>նվազեցվել է 2590.7 հազար դրամով և կազմել 114,471.3 հազար դրամ, իսկ մաքրման ենթակա տարածքը ավելացել 31.2 հա-ով և կազմել 98.0 հա: Միջոցառման իրականացման համար ծախսվել է 114,375.8 հազար դրամ:</p> <ul style="list-style-type: none"> • Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման նպատակով 02.09.2019թ. կնքվել է պայմանագիր «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի հետ. պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 527 899.200 հազար դրամ՝ որից 2019 թվականի համար՝ 112 375.756 հազար դրամ, 2020 թվականի համար՝ 203 563.173 հազար դրամ, 2021 թվականի համար՝ 211 960.271 հազար դրամ: <p>Անտառածածկ տարածքների աննախադեպ խտությունը, անկանխատեսելի խորությամբ ճահճուտները, եղանակային անբարենպաստ պայմանները, նախատեսվածից ավելի կոճղերի առկայությունը լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծել աշխատանքները պայմանագրով նախատեսված ժամկետում ավարտելու համար: Հաշվի առնելով վերոնշյալ</p>
--	--	--	--	--	--

						<p>հանգամանքները՝ կապալառուի առաջարկով և փոխադարձ համաձայնությամբ, օրենքով սահմանված կարգով, աշխատանքների ավարտման վերջնաժամկետը երկարաձգվել է մեկ ամսով: Տարեվերջին լիարժեք մաքրված տարածքները կազմել են շուրջ 30 հա, ևս 50 հա անտառածածկ տարածքներում հիմնականում ավարտվել են ծառերի, թփերի հատման աշխատանքները: Տարածքներից կոճղերի դուրսբերման, արմատախիլ անելու և հարթեցման աշխատանքները շարունակվելու են հունվար ամսին:</p> <ul style="list-style-type: none"> • Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նպատակով 23.04.2019թ. կնքվել է 800.0 հազար դրամի պայմանագիր «Հուսալի Կամար» ՍՊԸ հետ: Պայմանագրով նախատեսված ծառայությունները 100%-ով՝ 800.0 հազար դրամի, իրականացվել են: • Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման 2019-2023 թվականների ծրագրի իրականացման համար անտառների գույքագրման» ծառայությունների մատուցման նպատակով 11.03.2019թ. կնքվել է 800.0 հազար դրամի
--	--	--	--	--	--	---

							<p>պայմանագիր «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ: Պայմանագրով նախատեսված ծառայությունները 100%-ով՝ 800.0 հազար դրամի, իրականացվել են:</p> <ul style="list-style-type: none"> • Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման 2019 թվականի ծրագրի իրականացման համար հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման նպատակով 25.03.2019թ. կնքվել է 400.0 հազար դրամի պայմանագրեր «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ: Պայմանագրով նախատեսված ծառայությունները 100%-ով՝ 400.0 հազար դրամի, իրականացվել են:
2.2	Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնում	Լճի շրջակայքում անտառաշերտի հիմնում	Շրջակա միջավայրի նախարարություն	Գեղարքունիքի մարզպետարան	2019 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	<p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը սեփական միջոցների հաշվին 2019թ. Սևանի մասնաճյուղի Ախթամար տեղամասի 2-րդ պահաբաժնի 15, 16, 17 քառակուսիներում (ընդհանուր 6.1 հա տարածքի վրա) իրականացրել է անտառտնկման աշխատանքներ, որի համար տնկանյութը վերցվել է Մարտունու մասնաճյուղի տնկարանում աճեցված բարդի տեսակի բնական վերածից: 700 հատ տնկիներով կատարվել են լրացման աշխատանքներ՝ Սևանի մասնաճյուղի Ախթամար տեղամասում հիմնված Հայ-բելառուսական բարեկամության անտառի ցանկապատի եզրով:</p>

							Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Սևանի մասնաճյուղի կողմից Հայ-բելառուսական բարեկամության անտառհիմնման շրջանակներում Ախթամար տեղամասում հիմնված անտառտնկարկում իրականացվել է ծառերի լրացման աշխատանքներ՝ 4500 հատ սոճենի տեսակի տնկիներով: Որպես տնկանյութ օգտագործվել են Սևանի տեղամասի 2-րդ պահաբաժնի սոճենի տեսակի բնական վերածից հանված տնկիները:
2.3	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների մաքրման աշխատանքների իրականացում	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների ապամոնտաժում և թափոնների մաքրում	Տնտեսվարող սուբյեկտներ (համաձայնությամբ)	Շրջակա միջավայրի նախարարություն	2019 թ. և շարունակական	Ապոլինի կառուցված մաքրման ենթակա շինություններ ի սեփականատերերի միջոցների հաշվին, տիրազուրկ շինություններ ի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում մինչև 1905.0 բացարձակ նիշն ընկած հատվածում հաշվառված է եղել 4729 ապոլինի շենք-շինություններ: Նախորդ տարիներին «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից ապամոնտաժվել է 831 շենք-շինություններ: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, համաձայն վարչապետի 2019 թ. մարտի 15-ի N02/12.4/17623 1 կետի հանձնարարականի, քննարկել է ապոլինի շենք-շինությունների ապամոնտաժման հարցը և ծանուցագրեր է ուղարկել ավելի քան 100 տնտեսվարող սուբյեկտների և սեփականատերերի՝ մինչև 1901.5 նիշն ընկած տարածքների 394 միավոր շենք-շինություններն ապամոնտաժելու պահանջով: Սևանա լճի շրջակայքում

						<p>մինչև 1905.0 նիշն ընկած տարածքներում ենթակառուցվածքների ապամոնտաժման հարցը քննարկվել է ՀՀ վարչապետի 2019 թ. հունվարի 9-ի N3-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից, որը հունվարի 10-ից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում ուսումնասիրություններ է կատարել «Սևան» ազգային պարկի տարածքում և խնդրի լուծման համար ներկայացրել առաջարկություններ: Վարչապետի 2019թ. հոկտեմբերի 18-ի N02/12.4/22713 հանձնարարականով Սևանա լճի ափամերձ տարածքներում գտնվող շենք-շինությունների գույքագրման և ապամոնտաժման ենթակա շենք-շինությունների հաշվառման և ծավալների գնահատման աշխատանքների իրականացման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացվող աշխատանքներն ընթացքի մեջ են:</p> <p>ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով ՀՀ ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով»-ը ղեկավարվելով «Սևանա լճի մասին» օրենքի 20 և 21 հոդվածների դրույթներով և 2019թ. աշխատանքային տարեկան</p>
--	--	--	--	--	--	--

							<p>ծրագրով, հաշվետու ժամանակա հատվածում իրականացրել է Սևանա լճի էկոհամակարգի բնական ռեսուրսների պահպանման, վերականգնման, վերարտադրության և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների և մի շարք ՓԲԸ-ի կողմից ներկայացված ծրագրերի, հաշվետվությունների, նախագծերի և տեխնիկա- տնտեսական հիմնադրույթների փորձագիտական եզրակացություններ:</p> <p>Հանձնաժողովի կողմից կազմակերպվել է 14 նիստ: (հաշվետվությունը 8 թերթ ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարություն):</p>
2.4	<p>Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում կենդանական ռեսուրսների հաշվառում, օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում, ձվա- դրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան</p>	<p>Կենդանական ռեսուրսների, այդ թվում՝ ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում և օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) Գեղարքունիքի մարզպետարան</p>	<p>2019 թ. և շարունակական</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ «Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» միջոցառման</p>	<p><u>Շրջակա միջավայրի նախարարություն</u></p> <p>«Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում կենդանական ռեսուրսների հաշվառում, օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում» միջոցառման կատարման վերաբերյալ, հայտնում են,</p>

	<p>վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում</p>	<p>վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում</p>			<p>շրջանակներում՝ 7,624.3 հազ. դրամ և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին</p>	<p>որ ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/03» ծածկագրի պայմանագրով նախատեսված աշխատանքները 100%-ով՝ 6 690.0 հազար դրամի, իրականացվել են:</p> <p>ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կողմից մշակվել և շրջակա միջավայրի նախարարության կողմից հավանության է արժանացել «Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքներ» ծրագրի շրջանակներում նախատեսվող գիտական որսի ժամանակացույցը:</p> <p>ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կողմից ներկայացվել է «Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի խեցգետնի պաշարների հաշվառում» ծրագրի նախապատրաստական աշխատանքների հաշվետվությունը: 2019 հոկտեմբերի 25-ի թիվ N 2459-476 գրությամբ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը ներկայացրել է կատարված աշխատանքների միջանկյալ հաշվետվություն:</p> <p>ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և</p>
--	--	--	--	--	---	---

						<p>հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը 09.12.2019թ. N2459-502 գրությամբ ներկայացրել է 2019 թվականի օգոստոսի 20-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ19/03» ծածկագրի պայմանագրով <<Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի խեցգետնի պաշարների հաշվառում>> ծրագրի ավարտական հաշվետվությունը, ինչը սահմանված կարգով ընդունվել է:</p> <p><u>Սևանա լճում ձկնային պաշարներն ունեն հետևյալ պատկերը՝</u></p> <p><u>Սիգ</u></p> <p>Ի հաշիվ այն բանի, որ 2019թ. 2+ տարեկան ձկների մասնաբաժինը եղել է ավելի մեծ քան 2018թ.-ին, սիգի պոպուլյացիայի ձկների միջին քաշը նվազել է, ինչի արդյունքում նվազել է նաև արդյունագործական պաշարների ընդհանուր քաշը: Սիգի պոպուլյացիայի տարիքային կազմի փոփոխություններն առանձին տարիներին (հատկապես ձվադրման շրջանում) առավել ինտենսիվ գերորսի արդյունք են: Ընդ որում անհրաժեշտ է նշել, որ 2+ տարիքի ձկները 2017թ. ծնված առանձնյակներն են, իսկ հաշվի առնելով որսում 1+ տարիքի (2018թ ծնված) ձկների մասնաբաժնի չնչին քանակը, կարելի է ենթադրել, որ հաջորդ տարի արդյունագործական պաշարները կշարունակեն նվազել:</p>
--	--	--	--	--	--	--

						<p>Արդյունագործական նշանակության պաշարների աճը ձվադրման ակտիվ փուլի մեկնարկից առաջ մնացել է ցանկալի մակարդակից ցածր և կազմել է մոտ 667 տ: Ընդ որում, Փոքր Սևանում արդյունագործական պաշարները կազմել են 166 տ, իսկ Մեծ Սևանում՝ 501տ:</p> <p>Այսպիսով, սիգի պաշարների գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ նախորդ տարվա համեմատ դիտվել է սիգի ընդհանուր պաշարների մոտ 9.5 % նվազում: 2019թ.-ին ձկան պաշարները պելագիալում հասել են 2668 տ: Ընդ որում, Փոքր Սևանում եղել է 664 տ, իսկ Մեծ Սևանում՝ 2004 տ:</p> <p>Շարունակվող գերորսի պատճառով արդյունաբերական նշանակության պաշարների հարաբերական մասնաբաժնի աճ չի նկատվել և մնում է ընդհանուր պաշարների 25% սահմաններում, ինչի արդյունքում արդյունագործական նշանակության պաշարների աճը ձվադրման ակտիվ փուլի մեկնարկից առաջ մնացել է ցանկալի մակարդակից ցածր և կազմել է մոտ 667 տ: Ընդ որում, Փոքր Սևանում արդյունագործական պաշարները կազմել են 166 տ, իսկ Մեծ Սևանում՝ 501տ:</p> <p>Ինտերպոլյացիոն մոդելի կիրառմամբ բացահայտվել է, որ սիգի</p>
--	--	--	--	--	--	--

						<p>արդյունագործական պաշարների միջին խտությունը պելագիալում 2019 թ.-ին կազմել է 6.0 կգ/հա, որը պակաս է 2018թ. համեմատ</p> <p>Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ 2018թ. համեմատ 2019թ. Սևանա լճում նկատվել է սիգի պաշարների կրճատում 9,5 %-ով, որը, հատկապես ձվադրման շրջանում որսի հետևանք է: Բացի այդ, որսի գերակշիռ մասը կազմել են ոչ արդյունագործական չափի ձկները, որոնք ապահովում են հաջորդ տարիների արդյունագործական պաշարների համալրումը:</p> <p>Եզրակացություններ և առաջարկություններ 2018թ. համեմատ 2019թ. Սևանա լճում նկատվել է սիգի պաշարների կրճատում, ինչը ապօրինի որսի հետևանքով լճում սիգի թվաքանակի կրճատման, ինչպես նաև պոպուլյացիայում մեծ տարիքի առանձնյակների մասնաբաժնի կրճատման արդյունք է: Նման իրավիճակի շարունակումը կհանգեցնի սիգի արդյունագործական պաշարների հետագա անկմանը:</p> <p>Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկվում է խստացնել ձկնային պաշարների հսկողությունը Սևանա լճում ամբողջ տարվա ընթացքում և</p>
--	--	--	--	--	--	--

						<p>շարունակել սիգի որսի արգելքը 2020 թվականին:</p> <p>Առաջարկվում է սահմանել որսի արգելք սիգ ձկնատեսակի ձվադրման շրջանում, որը եղանակային պայմաններից կախված, ամենայն հավանականությամբ, կընդգրկի դեկտեմբերի 1-ից հունվարի 10-ը ժամանակահատվածը: Առավել ինտենսիվ գործընթաց կարելի է սպասել դեկտեմբերի վերջ-հունվարի սկիզբ ժամանակահատվածում:</p> <p><u>Արծաթափայլ կարաս</u></p> <p>Սևանա լճում արծաթափայլ կարասի պաշարները խզման եզրին են: Լճի պելագիալում այս ձկնատեսակը գրեթե չի հանդիպում: Հանդիպում է հիմնականում լճախորշերում, այն էլ աննշան քանակներով:</p> <p>Սևանի կողակի, Սևանի բեղաձկան և այլ ձկնատեսակների ընդհանուր զանգվածի որոշում և վիճակի գնահատում:</p> <p>«Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» ծրագրի շրջանակներում կատարված գիտարշավների ժամանակ Սևանա լճից կողակի և բեղաձկան առանձնյակներ չեն հանդիպել: Կատարվել է նաև հարցում ձկնորսների և ձկնավաճառներ շրջանում, ովքեր ևս փաստել են, որ</p>
--	--	--	--	--	--	---

						<p>այդ ձկնատեսակները լճում գրեթե չեն հանդպիում: Այս ձկնատեսակները գտնվում են անհետացման եզրին պաշարները լճում խզված են և անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել լճում այս արժեքավոր ձկնատեսակների պոպուլյացիաների պահպանության և արհեստական վերարտադրության ուղղությամբ:</p> <p>Խեցգետին</p> <p>Սևանա լճի արդյունագործական չափերի խեցգետինների կենսազանգվածը 2019թ. չի գերազանցում 200տ (ոչ արդյունագործական չափերի կենդանիների մասնաբաժինը չի հանված), վերջինս 11 անգամ պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Խեցգետնի արդյունագործական պաշարները լճում խզված են: Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը գտնում է, որ լճում պետք է արգելել խեցգետնի որսը: Սևանա լճի գետերում երկարաչանչ խեցգետին չի հայտնաբերված: Գետաբերանային հատվածներում՝ լճի հետ միախառնված տեղերում երբեմն հանդիպում են առանձին առանձնյակներ:</p>	
2.5	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տարածքում	Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի, կապի,	Էկոնոմիկայի նախարարություն Բաղաքաշինության կոմիտե	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար-	2019թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված	<p><u>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</u></p> <p>Գեղարքունիքի մարզում</p>

	<p>մարզերի և համայնքների՝ ըստ ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրերի մշակում</p>	<p>զբոսաշրջության, քաղաքաշինության և բնապահպանության ոլորտների զարգացման միջոցառումների մշակում</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>րություն Արտակարգ իրավիճակների նախարարություն Գեղարքունիքի մարզպետարան Վայոց ձորի մարզպետարան Սյունիքի մարզպետարան</p>		<p>այլ միջոցների հաշվին</p>	<p>իսպանական «Աքսիոնա Էներգիա Գլոբալ Էս. Էլ.» ընկերությունը (Ընկերություն) նախատեսում է կառուցել 100-150 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրակայան: Ընկերությունն իրականացրել է քանու ներուժի գնահատման աշխատանքներ և ներկայացրել է ներդրումային ծրագիր: Ընկերությանն առաջարկվել է օպտիմալացնել կայանի կառուցման ծախսերն՝ ըստ այդմ առաջարկել ՀՀ էներգետիկ համակարգի համար ընդունելի սակագին: Ընկերությունը վերանայում է Ներդրումային ծրագիրն այն կրկին ներկայացնելու համար: Գեղարքունիքի մարզում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 3 կազմակերպությունների տրվել են մինչև 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաներ, որոնցից էլեկտրական էներգիա է արտադրում 1 կայան՝ մոտ 1,32 ՄՎտ հզորությամբ և 2.43 մլն կվտժ էլեկտրական էներգիայի փաստացի միջին տարեկան օգտակար առաքումով, իսկ կառուցման փուլում են գտնվում 2 արևային կայաններ՝ մոտ 8,2 ՄՎտ հզորությամբ և 16.07 մլն կվտժ տարեկան արտադրանքով: ՀՀ կառավարության 2016թ.</p>
--	--	---	--	---	--	-----------------------------	---

						<p>դեկտեմբերի 29-ի նիստի № 53 արձանագրության 37-րդ կետով հավանության արժանացած «Արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ներդրումային ծրագրի» առաջին փուլում նախատեսված է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մասրիկ տեղանքում կառուցել Մասրիկ-1 արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայան՝ 55 ՄՎտ պիկային հզորությամբ: Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար անհրաժեշտ գործընթացները կանոնակարգելու համար ՀՀ կառավարության կողմից 2019թ. դեկտեմբերի 19-ին ընդունվել է թիվ 1904-Ա որոշումը:</p> <p>«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից Սևանա լճի ջրի տակ մնացած 35 կՎ լարման օդային գծի մետաղական հենարանների և դրանց հիմքերի երկաթբետոնե տարրերի դուրս բերման նպատակով ապամոնտաժման աշխատանքները նախատեսվում է սկսել 2020 թ. գարնանը և ավարտել առաջին կիսամյակի ընթացքում:</p> <p>Ջրածածկի ենթակա տարածքում գտնվող «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (Ընկերություն) հաշվեկշռում ներառված Ծովագյուղի ԳԲԿ - Ճամբարակ չգործող ստորգետնյա գազատարի</p>
--	--	--	--	--	--	--

						<p>ապամոնտաժումը կազմակերպելու նպատակով, 2019թ. ընթացքում կատարվել են գազատարի ապամոնտաժման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերլուծություն և գործող կարգի համաձայն Ընկերությունը սկսել է դուրս գրման գործընթացը: Գազատարի ապամոնտաժումը նախատեսվում է իրականացնել 2020թ. ընթացքում:</p> <p>Մինևոյն ժամանակ, Ընկերությունը 2019թ. մայիսի 10-ին գրությամբ տեղեկացրել է ջրածածկի ենթակա տարածքներում գազատարերի այլ սեփականատերերին՝ գազատարերի ապամոնտաժման անհրաժեշտության վերաբերյալ:</p> <p>«Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Ոռոգում-Ջրառ» ՓԲԸ-ների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից 07.06.2019թ.-ին ապակապա րակնքվել և 15.11.2019թ.-ին կապարակնքվել է Սևան ՀԷԿ-ի մուտքային ջրանցքի վահանը:</p> <p>2019թ.-ի ընթացքում ապահովվել է Սևան ՀԷԿ-ի ձկնապաշտպան կառույցի անխափան աշխատանքը:</p> <p>Մինչև 2019թ.-ի ոռոգման ժամանակաշրջանը կատարվել են հիդրոտեխնիկական կառույցների վերանորոգման աշխատանքներ,</p>
--	--	--	--	--	--	---

						<p>կենցաղային աղբից մաքրվել են Սևան ՇԷԿ-ից մինչև Հրազդան ՇԷԿ ընկած հատվածում ջրատարները և հարակից տարածքները:</p> <p>Կառավարության կողմից հաստատվել է Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը: Տարածքային կառավարման և զարգացման նախարարի կողմից հաստատվել է Սյունիքի մարզի 2019 թվականի տարեկան գործունեության ծրագիրը: Հաստատվել են Սիսիան և Գորայք համայնքների հնգամյա զարգացման ծրագրերը:</p> <p>Վայոց ձորի մարզում նախագծման փուլում են Հերիերի ջրամբարում կուտակված ջուրը (7-8 մլն խորանարդ մետր) մարզի ընդհանուր ոռոգման համակարգում ընդգրկելու աշխատանքները: Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից մարզում արդեն հիմնվել և գործում են մոտ 45 հա կաթիլային ոռոգման համակարգ, որն իր հերթին կբերի ոռոգման ջրի խնայողության, նպաստելով Սևանա լճի մակարդակի բարձրացմանը:</p> <p>Գեղարքունիքի մարզի բոլոր համայնքներն ունեն հաստատված հնգամյա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր՝ ըստ ոլորտների, որոնք տեղադրված են</p>
--	--	--	--	--	--	---

							մարզպետարանի կայքում:
2.6	Անտառշերտերի և հողահանդակների հաշվառում, գույքագրում	Ափամերձ անտառների գույքագրում և հողօգտագործման քարտեզների թարմացում, (տարբեր նշանակության (գյուղատնտեսական, բնապահպանական և այլն)	Շրջակա միջավայրի նախարարություն	Կադաստրի կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Գեղարքունիքի մարզպետարան	2019թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	Կադաստրի կոմիտե «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջի համաձայն՝ քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնում են միայն մասնավոր կազմակերպությունները, իսկ կոմիտեն որոշման նախագծով նախատեսված աշխատանքների իրականացմանը կարող է աջակցել: Աշխատանքները նախատեսվում են իրականացնել «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման շրջանակներում:
2.7	Էկոլոգիական (տարածագործառնական) գոտիների սահմանների ճշգրտում	Տարածագործառնական գոտիների ճշգրտում, սահմանների վերանայում	Շրջակա միջավայրի նախարարություն	Անշարժ գույքի կադաստրի կոմիտե Քաղաքաշինության կոմիտե	2019թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	Կադաստրի կոմիտե «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջի համաձայն՝ քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնում են միայն մասնավոր կազմակերպությունները, իսկ կոմիտեն որոշման նախագծով նախատեսված աշխատանքների իրականացմանը կարող է աջակցել: Աշխատանքները նախատեսվում են իրականացնել «Սևան» ազգային

							պարկի կառավարման պլանի մշակման շրջանակներում:
		2) Սևանա լճի ափամերձ տարածքների մինչև 1905 մ բարձրության հորիզոնական նիշերի ճշգրտում	Շրջակա միջավայրի նախարարություն	Անշարժ գույքի կադաստրի կոմիտե	2019թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	Աշխատանքների կատարումը պլանավորվում է իրականացնել կառավարման պլանի մշակման ընթացքում:
2.8	Սևանա լճի ցրհավաք ավազանում առաջացած կեղտաջրերի մաքրում	Լճի անմիջապես ափամերձ տարածքում գործող հանգստի և սպասարկման օբյեկտներում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրում	Տնտեսվարող սուբյեկտներ (համաձայնությամբ)	Շրջակա միջավայրի նախարարություն	2019թ. և շարունակական	Տնտեսվարող սուբյեկտների միջոցների հաշվին	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից պարկի տարածքում գործունեություն իրականացնող բոլոր տնտեսվարող սուբյեկտները պարբերաբար ծանուցվում են կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման անհրաժեշտության մասին, սակայն մինչ օրս տեղադրվել են 16 մաքրման կայաններ խոշոր տնտեսվարող սուբյեկտների կողմից, որից 2-ը՝ 2020 թվականին: ՊՈԱԿ-ն առաջարկել է կազմակերպել հանդիպում շահագրգիռ մարմինների հետ՝ քննարկելու կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների կառուցման և կոյուղագծերը կեղտաջրերի մաքրման մեկ խոշոր կայանին միացնելու տարբերակները:
2.9	Ձկան պաշարների համալրում	էնդեմիկ և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովում	Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձրկնաբուծության զարգացման հիմնադրամ	Շրջակա միջավայրի նախարարություն Գեղարքունիքի մարզպետարան Գիտությունների	2019թ. և շարունակական	Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծությ	«Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամը՝ «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» համալիր ծրագրի շրջանակներում

			(համաձայնությամբ), Շրջակա միջավայրի նախարարություն	ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	ան զարգացման համալիր ծրագրի շրջանակներում	շարունակել է 2015 թվականին մեկնարկած Սևանի իշխանի մանրածկան բացթողման աշխատանքները: Բացթողումն իրականացվել է ՀՀ բնապահպանության նախարարի 2016 թվականի հունիսի 6-ի N138-Ա հրամանով ստեղծված մասնագիտացված աշխատանքային խմբի անմիջական մասնակցությամբ: Ս/թ նոյեմբերի 19-ին բաց է թողնվել Սևանի իշխանի՝ ամառային ենթատեսակի 22.5գ միջին քաշով, շուրջ 11,000 (տասնմեկ հազար) և գեղարքունի ենթատեսակի՝ 3.5գ միջին քաշով շուրջ 40,000 (քառասուն հազար) հատ մանրածուկ: Այնուհետև ս/թ նոյեմբերի 26-ին իրականացվել է ևս մեկ խմբաքանակի ընդամենը՝ շուրջ 11,000 (տասնմեկ հազար) 21.5գ միջին քաշով ամառային իշխանի, և շուրջ 10,000 (տասը հազար) հատ 45.2գ միջին քաշով գեղարքունի իշխանի մանրածկան բացթողում: Մանրածուկը ձեռք է բերվել «Սևանի իշխան» ՓԲԸ պատկանող մանրածկան գործարանից, իսկ բացթողումն իրականացվել է Կարճաղբյուր և Մասրիկ գետերի գետաբերաններին հարակից հատվածներում: Այսպիսով 2019 թվականին
--	--	--	---	--	---	---

							իրականացվել է Սևանի իշխանի շուրջ 72,000 հատ մանրածկան բացթողում, որից 22,000-ը ամառային իշխան, իսկ 50,000-ը գեղարքունի ենթատեսակի:
2.10	«Սևան» ազգային պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ	Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն, վերարտադրություն, գիտական ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի իրականացում, հետազոտման տեխնոլոգիաների կիրառություն	Շրջակա միջավայրի նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2019 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ «Սևան» ազգային պարկի պահպանության գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարում միջոցառում՝ 252,666.4 հազ. դրամ	<p>ՀՀ կառավարության որոշմամբ հատկացված գումարը ավելացվել է և կազմել 372692.7 հազար դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ Գիտական բաժին</p> <p>ՊՈԱԿ-ի կողմից ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող 10 գետերի (Դրախտիկ, Կարճաղբյուր, Վարդենիկ, Մարտունի, Ծակքար, Լիճք, Արգիճի, Մասրիկ, Գավառագետ, Ձկնագետ,) տարբեր հատվածների ջրերում 200C և 370C աճող սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը (լակտոզադրական աղիքային ցուպիկների քանակը 1 լ ջրում), բորբոսասնկերի և խմորասնկերի քանակը, ինչպես նաև լուծված թթվածնի պարունակությունը, պերմանգանատային օքսիդացման արժեքը և ջրի ջերմաստիճանը: Մանրէաբանական հետազոտությունների արդյունքներից ելնելով գնահատվել է գետերի ջրերի էկոլոգիական որակը և սանիտարական վիճակը: Ելնելով մանրէաբանական ցուցանիշների (200C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակ, կոլի-</p>

						<p>ինդեքս) ստացված արդյունքներից՝ հետազոտված գետերի տարբեր հատվածների ջրերը, համաձայն Ռոմանենկոյի (Романенко и др., 1990) մակերևութային ջրի որակի էկոլոգասանիտարական գնահատման, դասվում են.</p> <p>Գետ Դրախտիկ Դրախտիկ գյուղից մոտ 200մ վերև - ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ թույլ աղտոտված կարգի - ըստ կոլի-ինդեքսի՝ շատ մաքուր կարգի գյուղից դուրս եկող հատված - ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ խիստ աղտոտված կարգի - ըստ կոլի-ինդեքսի՝ ուժեղ աղտոտված կարգի գետաբերան - ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ ուժեղ աղտոտված կարգի - ըստ կոլի ինդեքսի՝ թույլ աղտոտված կարգի:</p> <p>Գետ Կարճաղբյուր - ակունք՝ միանգամայն մաքուրից բավական մաքուր կարգի - գետաբերան՝ չափավոր աղտոտված կարգի:</p> <p>Գետ Վարդենիկ - ակունք - ըստ կոլի-ինդեքսի՝ շատ մաքուր կարգի - ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝</p>
--	--	--	--	--	--	--

						<p>չափավոր աղտոտված կարգի Վարդենիկ համայնքից մոտ 300մ ներքև՝ ուժեղ աղտոտվածից խիստ աղտոտված կարգի</p> <ul style="list-style-type: none"> - գետաբերան՝ ուժեղ աղտոտված կարգի: <p>Գետ Մարտունի</p> <ul style="list-style-type: none"> - ակունք՝ ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ թույլ աղտոտված կարգի, ըստ կոլի-ինդեքսի՝ բավական մաքուր կարգի - կեղտաջրերի թափման հատված՝ չափազանց կեղտոտ կարգի - գետաբերան՝ խիստ աղտոտվածից չափազանց կեղտոտ կարգի: <p>Գետ Ծակքար</p> <ul style="list-style-type: none"> - ակունք՝ թույլ աղտոտված կարգի - գետաբերան՝ չափավոր աղտոտված կարգի: <p>Գետ Լիճք</p> <ul style="list-style-type: none"> - ակունք՝ չափազանց մաքուր կարգի - գետաբերան՝ չափավոր աղտոտվածից ուժեղ աղտոտված կարգի: <p>Գետ Արգիճի</p> <ul style="list-style-type: none"> - ակունք՝ շատ մաքուրից բավական մաքուր կարգի - Ներքին Գետաշենից ներքև՝ չափավոր աղտոտված կարգի - գետաբերան՝ թույլ աղտոտվածից չափավոր աղտոտված կարգի: <p>Գետ Գավառագետ</p> <ul style="list-style-type: none"> - ակունք՝ շատ մաքուրից բավական
--	--	--	--	--	--	--

						<p>մաքուր կարգի</p> <ul style="list-style-type: none"> - Նորատուա գյուղից վերև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ՝ խիստ աղտոտված կարգի: <p>Գետ Մասրիկ</p> <ul style="list-style-type: none"> - ակունք՝ շատ մաքուրից միանգամայն մաքուր կարգի - Մասրիկ գյուղի կամրջի հարևանությամբ՝ բավական մաքուրից թույլ աղտոտված կարգի - գետաբերան՝ թույլ աղտոտվածից չափավոր աղտոտված կարգի <p>Գետ Ձկնագետ</p> <ul style="list-style-type: none"> - ակունք՝ շատ մաքուրից միանգամայն մաքուր կարգի - Սեմյոնովկա համայնքի անասնապահական հոսքաջրերի մուտքից 50 մ ներքև՝ խիստ աղտոտված կարգի: - գետաբերան՝ ուժեղ աղտոտված կարգի: <p style="text-align: center;"><u>ՍԵՎԱՆԱ ԼԻՃ</u></p> <p>2019թ. գարուն-աշուն ժամանակաշրջանում Սևանա լճի ջրերում ուսումնասիրվել է 200C-ում և 370C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը և կոլի-ինդեքսը (լակտոզադրական աղիքային ցուպիկների քանակը 1լ ջրում): Գարնանը (մայիս ամիս) կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ Մեծ Սևանի պելագիալի ջրերում</p>
--	--	--	--	--	--	---

						<p>(22-րդ դիտակետ) 200C-ում և 370C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար փոխվել է 95-264 ԳԱՄ/մլ և 49-90 ԳԱՄ/մլ սահմաններում: Համեմատական բարձր արժեք արձանագրվել է մերձհատակային շերտում: Ամռանը՝ (հուլիս ամիս) ջրի ծաղկման շրջանում, գարնան համեմատ լճի պելագիալի ջրերում արձանագրվել է սապրոֆիտ մանրէների թվաքանակի որոշակի նվազում: Առավել բարձր արժեքներ են գրանցվել լճի 10 մ խորությունում, իսկ ցածր՝ ջրի մակերևույթին: Դիտակետի ջրերում լակտոզադրական աղիքային ցուպիկներ չեն հայտնաբերվել: Աշնանը (հոկտեմբեր ամիս), ամռան համեմատ, Փոքր Սևանի պելագիալի ջրերում արձանագրվել է սապրոֆիտ մանրէների թվաքանակի աճ: Փոխվել է նաև նրանց հորիզոնական տեղաբաշխման պատկերը՝ առավել մեծ թվաքանակ արձանագրվել է ջրի մակերևույթին: Դիտակետի ջրերում լակտոզադրական աղիքային ցուպիկներ չեն հայտնաբերվել: Այսպիսով, հետազոտված ժամանակահատվածում լճի պելագիալի ջրերում 200C-ում և 370C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար փոխվել է 43-1150 և 10-150 ԳԱՄ/մլ,</p>
--	--	--	--	--	--	---

						<p>իսկ լիտորալ (ափամերձ) ջրերում՝ 290-1000 և 12-390 ԳԱՄ/մլ սահմաններում: 200C-ում աճող սապրոֆիտ մանրէների համեմատաբար մեծ թվաքանակ արձանագրվել է օգոստոս ամսին, իսկ փոքր՝ հուլիսին՝ լճի ջրի ծաղկման շրջանում, ինչը պայմանավորված է ֆիտոպլանկտոնի կողմից կենսածին տարրերի յուրացմամբ, ինչպես նաև նրանց արտազատած տոքսիկ նյութերի ազդեցությամբ: Լճի պելագիալի ջրերում լակտոզադրական աղիքային ցուպիկներ հայտնաբերվել են միայն հուլիս ամսին՝ Մեծ Սևանի 10 մ խորությունում (50 ԳԱՄ/լ): Փոքր Սևանի ափամերձ շրջանների ջրերում աղիքային ցուպիկներ հայտնաբերվել են հուլիս և հոկտեմբեր ամիսներին՝ 50-100 ԳԱՄ/լ:</p> <p>2019թ. Սևանա լճում իրականացվել է սիզի պոպուլյացիոն և կենսաբանական ցուցանիշների, նրանց տարածական տեղաբաշխման, կենսապայմանների հետազոտություններ:</p> <p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է հսկողություն ապօրինի ձկնորսության, անտառային օրենսդրության խախտումների, ինչպես նաև այլ բնապահպանական խախտումների կանխարգելման և հայտնաբերման ուղղությամբ: 2019թ. ընթացքում արձանագրվել է 103</p>
--	--	--	--	--	--	---

						<p>ապօրինի ձկնորսության (առգրավվել է 2801 սիգ տեսակի ձուկ և 749 հատ ձկնորսական պոլիէթիլենային ցանց), 2 ապօրինի խեցգետնաորսության (առգրավվել է 2.8 կգ խեցգետին, որը կենդանի վիճակում բաց է թողնվել լիճ և 42 հատ խեցգետնաորսիչ), 15 ապօրինի ծառահատման, 17 ապօրինի արածեցման, 3 ապօրինի ավազի դուրս բերման, 7 ռելիեֆի խախտման, 1 աղբաթափման, 3 տարածքի ապօրինի զավթման, 4 ապօրինի շինարարության դեպք:</p> <p>Հայտնաբերված բոլոր իրավախախտումների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ և ուղարկվել են իրավասու մարմիններին՝ համապատասխան ընթացք տալու, իրավախախտողներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:</p> <p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2019թ. հուլիսի 12-ի N239-Լ հրամանի համաձայն ստեղծվել է աշխատանքային խումբ, որը անտառապաթոլոգիական ուսումնասիրություններ է իրականացրել ՊՈԱԿ-ի Սևանի, Նորատուսի, Մարտունու, Վարդենիկի, Վարդենիսի, Արևիկի և Արտանիշի մասնաճյուղերում:</p> <p>Անտառապաթոլոգիական ուսումնասիրություններ են</p>
--	--	--	--	--	--	---

							իրականացվել նաև շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի կողմից գործուղված աշխատանքային խմբի կողմից: Արդյունքների հիման վրա «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2019թ. սեպտեմբերի 17-ի «Մասնաճյուղերի անտառներում 2019 թվականին իրականացվելիք բնափայտի մթերման ծավալները հաստատելու մասին» N348-L հրամանով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում իրականացվել են սանիտարական հատումներ: («Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ամփոփ հաշվետվությունը 28 թերթ գտնվում է շրջակա միջավայրի նախարարությունում):
2.11	Ապօրինի աղբավայրերի գոյացման գործընթացի կանխման և վերահսկողության իրականացման ուղղությամբ միջոցների ձեռնարկում, գույքագրման տվյալների համաձայն լուծարման	Աղբավայրերի բարեկարգում և կանոնավոր աղբահանության կազմակերպում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Քաղաքաշինության կոմիտե Շրջակա միջավայրի նախարարություն Առողջապահության նախարարություն	Գեղարքունիքի մարզպետարան «Սևան» ազգային պետական ոչ առևտրային կազմակերպության (համաձայնության մթ)	2019թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	<u>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</u> 2019 թ. ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզում կազմակերպվել և անցկացվել են երկու համապետական և երկու մարզային շաբաթօրյակներ: Մարզում նախկինում փաստագրված 138 աղբանոց-աղբակույտներից 109-ը փակվել է: Մարզի տարածքում առկա են 29 օրինական աղբավայրեր: Շաբաթօրյակների ընթացքում մաքրվել են համայնքային գլխավոր և

	ենթակա աղբավայրերի ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարում					երկրորդական ճանապարհները, միջհամայնքային ճանապարհների եզրերը, պատմամշակույթային վայրերի՝ հուշարձանների, գերեզմանոցների տարածքները: ՎՋԵԲ-ի աջակցությամբ իրականացվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարում» ծրագրի շրջանակներում ՀՀ Կոտայքի և ՀՀ Գեղարքունիքի մարզերի բոլոր բնակավայրերի համար նախատեսվում է կառուցել մեկ սանիտարական աղբավայր՝ Հրազդան համայնքում: Ծրագրից բխող պարտավորությունների շրջանակներում նախատեսվում է նոր սանիտարական աղբավայրի կառուցումից հետո փակել երկու մարզերում գործող աղբանոցները:
2.12	Որոտան-Արփա- Սևան հիդրոհանգույցի ջրային համակարգի հավատարմագրայ ին կառավարման իրականացում	Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի շահագործում և պահպանում՝ օրենսդրությամբ սահմանված նորմերի համաձայն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքն երի նախարարու թյան ջրային կոմիտե	2019թ.	2004 թվականի օգոստոսի 17- ին կնքված N ԾՁԲ-04/36 պայմանագրի համաձայն, որով նախատեսվել է Որոտան- Արփա-Սևան հիդրոհանգույ ցի ջրային	<u>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</u> «Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման ծառայություն» ծրագրով 2019 թվականին Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման նպատակով հավատարմագրային կառավարչի պահպանման ծախսերի համար հատկացվել է 205.8 մլն. դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է:

					<p>համակարգը հանձնել հավատարմագրային կառավարման («Արփա-Սևան» ԲԲԸ), նախատեսվում է 2017-2019 թվականների համար յուրաքանչյուր տարի Արփա-Սևան թունելի պահպանման և շահաործման նպատակով հավատարմագրային կառավարչի պահպանման ծախսերի համար հատկացնել 205,800.0 հազ. դրամ:</p>	
--	--	--	--	--	--	--